

9051

թիվ 14, Հրատարակչություն «Հայրենի»-ի

ԼԵՕՆԻԳ ԱՆԴՐԷՎ

# ԶԱՅՐՈՅԹԻ ՕՐԸ

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԸՆԷ



Ա. Մ.



891.71  
Վ. 57

1911

ՀԱՅՐԵՆԻԻ-Ի ՏՊԱՐԱՆ  
ՊՕՍՐԸՆ



THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

1958

17 JUL 2006

Քիւ 14, Հրասարակուրիւն „Հայրենիք“ի

NOV 2010


891.71  
Ա-57

ԼԵՕՆԻԴ ԱՆԴՐԷԿ

# ԶԱՅՐՈՅԹԻ ՕՐԸ

ՔԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԷՆԷ

Ա. Մ.



1911  
«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՏՊԱՐԱՆ  
ՊՕՍԹԸՆ

21

222

9056

12.02.2013

9884

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



25524-60



## ԶԱՅՐՈՑՔԻ ՕՐԸ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

1.

... Այս ազատ երգը՝ արդարութեան և հատուցման դոնող օրերի մասին՝ հիւսեցի ես, ինչպէս կարող էի, ես—

**ՋԵՐՕՆԻՄՕ ՊԱՍԿԱՆԵԱ,**

սիցիլիական աւագակը, մարդասպանը, կողողախն ու սհառաբորձը:

Հիւսեցի իմ երգը, ինչպէս կարող էի, ես ուզեցի երգել այն շատ բարձր, այնպէս՝ ինչպէս երգուում են բոլոր գեղեցիկ երգերը, բայց այդ ինձ չը թոյլատրեց իմ բանասպանը: Բանասպանը մազերով ծածկւած ահանջներ ունի, նեղ ու սեղմւած անցքերով, որոնց մէջ կարող են անցնել միայն անարդարութեան խօսքեր, գալարուղ ու սողացող՝ փորի վրայ, իբրև սառին արարածներ: Մինչդեռ իմ բոլոր խօսքերը շրջում են ուղիղ, նրանց կուրծքը առողջ է և թիկունքը լայն.— ա՛հ, ինչպէս ցաւազինօրէն հնչում էին իմ խօսքերը բանասպանի ջնք՝ յահանջներում, մազերով ծածկւած:

էյ, բանտապահ, ականջդ մի՛ գըցիր: Ես  
քո գանկի միջովը պիտի անցնեմ:

— Եթէ ականջը գոց է՝ մէկ ուրիշ մուտք  
գտիր, Զերօնիմօ՛, բարեկամարար ասացի ինչս  
ինձ: Եւ մտածեցի, և փնտռեցի և հնարեցի և  
գտայ, որովհետեւ Զերօնիմօն այնքան էյ յիմար  
չէ: Եւ ահաւասիկ թէ ի՛նչ գտայ ես. ես մի  
քար գտայ: Եւ ահաւասիկ թէ ի՛նչ արի ես.  
Քարի վրան ես մի երգ փորագրեցի. նրա սառը  
օրրաը ես բոցավառեցի զայրոյթի հարւածնե-  
րով: Եւ երբ քարը կենդանացաւ և նայեց ինձ  
վրայ զայրոյթի հրեղէն աչքերով՝ ես զգու-  
շութեամբ տարի և բանտի շրջապատի ծայրին  
տեղաւորեցի այն:

Գիտե՞՞ս արդեօք թէ ի՛նչ եմ մտածում: Ես  
խեղացի մէկն եմ. ես մտածում եմ, որ շատ  
չուտով երկրի վրայ է իջնելու մի բարեկամա-  
կան հարւած և կրկին կործանելու է ձեր քա-  
ղաքը. — այն ժամանակ պատուարները կը տա-  
պալուին, իմ քարը կը թաւալուի և կը փչրի բան-  
տապետի գլուխը: Իսկ երբ կը փչրի այն՝ նրա  
մեզբամոմի պէս փափուկ մոխրագոյն-կարմ-  
րորակ ուզեղի վրայ կը գրօշմէ իմ ազատ երգը,  
կը ճնշէ այն, ինչպէս արքայական մի կնիք,  
ինչպէս զայրոյթի մի նոր պատուիրան... և  
այդպէս էլ գերեզման կիջնէ իմ բանտապահը:

2.

Եթէ ես ապրեմ, այն ժամանակ ես ուրա-  
խութիւնից պիտի ծիծաղեմ, եթէ ես մեռած  
լինեմ, իմ ոսկորները անհաստատ գերեզմանում  
պար պիտի բռնեն: Եւ ի՛նչ ուրախ պար է լինե-  
լու այն:

Բայց կարո՞ղ ես դու երբև իցէ երգուել, որ  
այդ չպիտի լինի: Դրանից առաջ նոյն հարւածը  
ինձ հողից դուրս է նետելու, իմ փտած դա-  
գաղը, իմ անպիտան միսերը— իմ ամբողջ էու-  
թիւնը— մեռած, յաւիտեան գերեզմանւած,  
գետնին ճնշւած: Չէ՞ որ նոյնը պատահեց այն  
մեծ օրերում, հողը ճեղքւեցաւ և գերեզման-  
ներից դագաղներ դուրս սողացին:

Խաղաղ դագաղներ, խնջոյքի մէջ չը կանչ-  
ւած հիւրեր:

3.

Ահաւասիկ իմ ընկերների անունները, որոնց  
հետ մտերմացայ այն կարճատեւ ժամերում. —  
Պասկալէ՛ մի պրօֆէսօր, Զուգէպօ, Պինչիօ,  
Ալբա: Նրանց հրացանի բռնեցին զինւորները:  
Մէկ ուրիշ ևս կար՝ երիտասարդ, հաճոյալի և  
այնքան գեղեցիկ, որ ցաւ էի զգում վրան նա-  
յելու. ես նրան զաւակիս տեղ էի դնում, իսկ  
նա ինձ յարգում էր, ինչպէս իր հօրը: Բայց նը-  
րա անունը ես չը գիտեմ, ժամանակ չունեցայ  
իրենից հարցնելու այդ, թերևս մոռացայ, նը-  
րան ևս հրացանի բռնեցին զինւորները: Թուում  
է թէ դարձեալ մէկ ևս կար, կամ երկուսը—  
նոյնպէս բարեկամներ... չեմ յիշում: Երբ այն  
երիտասարդին հրացանի էին բռնում, ես հեռու  
չը փախայ, այնտեղ էլ թագւեցայ, կործանւած  
պարիսպի ետև, ջարդւած փշենիին մօտ: Եւ  
ամեն բան տեսնում էի և լսում: Եւ երբ ես  
հեռանում էի՝ խորտակւած փշենին ցցեց իմ  
մէջ իր մեռած ասեղներից մէկը: Չէ՞ որ նա,  
ցանկապատի մօտ էր տնկւած, գողերին ներս  
չը թողնելու համար: Հարուստները ինչպիսի՛  
լաւ սպասաւորներ ունեն:

4.

Նրանց հրացանազարկ արին զին սրները, Յիշողութեանդ մէջ պահիր այն անունները, որ ասացի էդ, իսկ միտաների մասին, որոնք անուններ չունէին՝ պարզապէս մտածիր, որ նրանց հրացանազարկ արին: Բայց չը տեսի թէ երեսդ խաչակնքես, և կամ անելի վատը՝ պատարագ անել ասո նրանց համար — նրանց այդպիսի բաներ չէին սիրում: Նրանք հրացանազարկ եղան արդարութեան համարանալու պատճառով, իսկ եթէ ուզում ես սրտ խօսել, ուրեմն որևէ կերպ անելի ուրախ սուտներ խօսիր, բայց ոչ հոգեհանգիստով. նրանք այդպիսի բաներ չէին սիրում:

5.

Այդ առաջին հարածը, որ կործանեց թէ բանար և թէ քաղաքը՝ անբնականորէն հզօր մի ձայն ունէր, և արտասովոր կերպով, մի գերբնական կարևորութիւն ունեցող, ես մտնչում էր ներքեկից, գետնի տակից, անսակման էր և խուլօրէն սպանական, և ամեն բան օրօրում էր և գաւազիծում: Եւ ասկարին չը հասկանալով թէ ինչ էր անցնում՝ ես արդէն գիտէի որ ամէն ինչ վերջացած էր, թերևս վերջացած էր նոյն իսկ ինքը աշխարհը: Բայց իս այնքան էլ չը վախեցայ, և սուսից պիտի վարենայի, եթէ նոյն իսկ կործանած էր աշխարհը՝ ես երկար մտնչում էր, այդ սաղրեկերեայ, խուլ փողակարը:

Եւ յանկարծ քաղաքավարիօրէն գոռերը բացւեցին:

6.

Ես նստած էի բանաում երկար և անյուսալի վիճակում: Ես արդէն փորձեցի փախչել, սակայն անյաջող: Եւ նոյն իսկ դուն էլ շէիր կարող փախչել, չը կարծես այդ այնքան փառաւոր կերպով էր շինւած այդ անիծեալ բանարը:

Եւ ես ընտելացայ վանդակների երկաթին և պատերի թարին, և նրանք ինձ յաւիտենական էին թւում, իսկ նա՝ որ կառուցել էր այն՝ ամենահզօրը աշխարհիս երեսին: Մինչև իսկ չէի օգնում մտածել, իրաւացի՞ էր նա թէ ոչ — այնքան հզօր էր նա և յաւիտենական: Մինչև իսկ երացում ես չէի տեսնում արցառութիւնը, չէի հաւատում, չէի սպասում, չէի դժգոհում: Եւ վախենում էի նրան կանչել: Ազատութեանը կանչել՝ վաճառուր է. երբ լուում ես՝ դարձեալ կարող ես ազդել. բայց եթէ գէթ մէկ անգամ, ամենացած ձայնով կանչես նրան, այն մահանակ կամ պէտք է ձեռք ձգել նրան, կամ մեռնել: Իսկ ճամարառութիւն է. այնպէս է խօսում նա և զատկալ է պրօֆեսսորը:

Եւ անաստիկ այդպէս անյուսալի կերպով ես նստած էի բանաում, երբ յանկարծ դուռը բացւեցաւ: Քաղաքավարի կերպով և ինքնիրեն, յամենայն դէպս՝ նրան բացողը մարդկային մէ ձեռքը չէր:

7.

Աւերակների մէջ պատկած էր փոքրօք, գործ կարելի օրէն անկարգ վիճակում: Այն ամեն երկրէ ինչից որ չէի գեր են կառուցում, վերագործած էր և անբաժնում էր իր նախնական

գրուածեան մէջ : Տուները ցան ու ցրիւ էին լինում, պայթում էին, ճօճում արբածների պէս, նստում էին հողի վրայ, իրենց սեփական ջախջախած ոտների վրայ : Միւսները մոռալորէն ցած էին թաւալում, գլուխը սալալատակին զարկելով : Բացել էին այն տուփերը, որոնց մէջ մարդիկ են ապրում, թուղթերով շարուած : Պատկերները դեռ կախած էին պատերի վրայ, իսկ մարդիկ արդէն չէին երևում . նրանք դուրս էին թափուած, դուրս էին նետուած և այժմ պառկած էին քայքայի տակ : Եւ հոգեվարքի մէջ պալարում էր երկիրը, որովհետև դարձեալ փչեց նոյն ստորերկրեայ փողակարը, այն խուլ սատանան, որին իր խլութեան պատճառով թուում է, թէ եղած աղմուկը տակաւին քիչ է : Հաճելի, գործունէ այ, բարձրահասակ մի սատանայ . . . :

Ահաւասիկ ես արդէն ազատ էի և այդ չէի հասկանում . դեռ ևս քաջութիւն չուների հեռանալու անիծեալ բանտի մօտերից : Կանգնած էի և յիմարի պէս աւերակներին էի նայում : Ընկերներս նմանապէս այդտեղ էին հաւաքուած և նոյնպէս չէին հեռանում, շփոթուած խռնում էին, ինչպէս մանուկներ՝ իրենց ուրախութիւնից դարձող, ալբած, գետին թաւալող մօր շուրջը : Լա՛ւ մայր . . . . . :

Յանկարծ Պասկալէ պլօֆեսորն սասց .

— Նայեցէ՛ք :

Մի պատ, որ մենք յաւիտենական էինք կարծում . պայթեց երկու մասի . պատը և երկաթէ վանդակը նոյնպէս երկուսի ճեղքւեցին : Երկաթը ոլորեց, ճեղքւեց ինչպէս մի փտած փալաս . հասկանում ես : Իմ ձեռքերիս մէջ նա

նոյն իսկ չէր հնչում, յաւիտենական էր ձեռնում, ամենահոգորը, իսկ այժմ մի շրւղն իսկ չարժէր . հասկանում ես :

Այդտեղ ես և մնացած միւսները հասկացանք, որ մենք ազատ էինք :

8 .

Ազա՛տ էինք :

9 .

Եթէ ես հաւաքեմ աշխարհիս բոլոր բարի խօսքերը, որ միայն մարդիկն ունեն, զնքոյշ բառերը, հնչուն երգերը, և մի երամի պէս նետեմ նրանց զւարթօգի մէջ՝

Եթէ ես հաւաքեմ բոլոր մանուկների ժպիտները, ոչոքից չանարգուած կանանց ծիծաղները, ալեցարդ մայրերի փաղաքջանքները, բարեկամի ձեռքի պինդ սեղմումները, — և նրանցից մի անթառամ պսակ հիւսեմ մի անծանօթ հրաշագեղ գլխի վրայ՝

Եթէ ես մի դարձ անեմ ամբողջ աշխարհի շուրջ և հաւաքեմ բոլոր ծաղիկները, որոնք միայն գոյութիւն ունեն երկրիս երեսին — անտառներում, դաշտերի և մարգագետինների վրայ, հարուստների պարտէզներում, ջրերի խորքերում, ովկիանոսի կապոյտ յատակում . եթէ չօ հաւաքեմ բոլոր թանկագին փայլուն գոհարները, փորելով ամայի կիրճերում, անդնդախոր հանքերի մթութեան մէջ, կամ պոկեմ արքայական թագերից և հարուստների ականջներից — և այդ ամենից՝ և գոհարներից, և ծաղիկներից մի լուսարձակ լեռնակոյտ բարձրացնեմ՝

Եթէ ես հաւաքեմ ձիւնը երբում վաւսող բռնոր կրակները, բոլոր լոյսերը, բոլոր ճառագայթները, բոլոր կայծերը, բանկուսներն ու մեղմփայլածակուսները, և մի հոյակապ Կրքեհային արշալոյսով շնորհաբարարեմ ցնցեող աշխարհները —

Այն ժամանակ նոյն իսկ չպիտի կարողանամ թո անունը տալ, ճեզ պսակել, ճեզ դուռստիլ — ո՛վ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ :

10.

Աղատութիւն . . . :

11.

Գլխիս վեր տարածուում էր երկինքը, իսկ երկինքը միշտ բաց է հողմերի առջև և ամպերի շարժումների համար. ստներին տակ ճանապարհն էր երկարում, իսկ ճանապարհը միշտ ազատ է. — նա չիւնած է, որպէսզի մարդիկ քայլեն նրա վրայ, սաները շարժեն նրա երկարութեամբ, երթան ու դառնան, թողնեն մի բան և գտնեն մի արիւը . . . : Ճանապարհը — ահանում ես, նրա սիրու հէն է՝ ո՛վ ազատ է. նրան պէտք է համբուրես՝ երբ ազատ ես, և լաց լինես՝ անջատման վայրկեանին :

Եւ երբ ստները շարժւեցին ճանապարհի երկարութեամբ՝ ես մտածեցի թէ մի հրաշք է կատարւած :

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

1.

Մենք երկար շրջում էինք քաղաքում և ահանում էինք շատ բան, որ ապշեցուցիչ էր, անբնական ու ահաւելի :

Բայց ցերեկը կարճ էր, և գիշերը վրայհասաւ այնչափ շուտ՝ ինչպէս երբէք՝ և գիշերները, որոնք հրացանի պիտի բռնէին Պասկալէին՝ վաւսած ջահեր ունէին բանած :

2.

Երբ արդէն Պասկալէին պատի տակ կանգնեցրին, նրա կանգուն մնացած մասին առջև՝ և գիշերները հրացանները բարձրացրին, սպան հարցրեց նրան :

— Ահաւասիկ դուն անմիջապէս կը մեռնես. տա՛, ինչո՞ւ չես վախենում : Սէ՞ որ դարհսրելի է այն, ինչ որ պատահեց, և մենք բոլորս դունաթափւած ենք, իսկ դուն՝ ոչ չիւնչու :

Պասկալէն լուս էր. նա սպասում էր, թէ սպան դարձեալ ի՞նչ էր ասելու, որպէսզի մէկ անգամից պատասխանէր :

— Եւ որտեղից է այդ համարձակութիւնդ, թեքսերու բարձրացնել այն, որ ուրիշին է պատկանում, — այժմ, երբ մարդիկ երկիւղից մուսացած են իրենց իրենց, և նոյն իսկ իրենց զաւակներին, Եւ մի՞թէ չես խղճում այն մանուկ-



ներին ու կանանց, որոնք մեռան: Մենք տեսանք կատուններ, որոնք սոսկուժից խելագար-լեւ էին, իսկ դուռն՝ մարդ ես: Անմիջապէս կը հրամայեմ քեզ հրացանազարկ անել:

Սպան գեղեցիկ էր խօսում, բայց մեր Պասկալէն նրանից պակաս չէր: Այժմ նա հրացանազարկ է եղած, նա մեռած է, բայց երբևիցէ, մեռելների յարութեան օրը, դո՛ւն, մարդ, պիտի լսես նրա խօսքերը, և դուռն լաց պիտի լինես, եթէ միայն մինչև այն ժամանակ արցունքներդ չորացած չը լինեն:

Նա ասաց.

— Ես վերցրի ուրիշի սեփականութիւնը, որովհետև չուէի իմ սեփականը: Ես մի մեռեալի հազուստը վերցրի, իմ ողջ մարմինը հագցնելու համար, բայց դու ք տեսաք սյդ, և նորից մերկացրիք ինձ: Եւ ահա՛ ասիկ ես մերկ՝ ձեր հրացանների առջևն եմ կանգնած: Կրակեցէ՛ք, զինւորներ:

Բայց սպան թոյլ չը տւեց զինւորներին կրակելու, և խնդրեց նրան շարունակել իր խօսքը:

3.

— Ահա մերկ կանգնած եմ ձեր առջև, և ոչ մի բանից չեմ վախենում, նոյն իսկ ձեր հրացաններից: Իսկ դուք երկիւղից գունասուած էք, և վախենում էք ամեն բանից, մինչև իսկ ձեր հրացաններից, մինչև իսկ իմ մերկ մարմնից: Երբ հարւածը լսեց՝ նա կործանեց ու սպանեց ձեր քաղաքը, ձեր երջանկութիւնը, ձեր կանանց ու մանուկներին, իսկ իմ առջև նա միայն բանտի դռները բացաւ: Հետևաբար, ինչի՞ց պիտի վախենայի: Աշխարհիս երեսին ես ո-

չինչ ունեմ, որ իմ սեփականութիւնս լինէր: Ես մե՛րկ եմ:

4.

— Եւ եթէ կործանէր ամբողջ երկիրը և գազանները սկսէին սոսկումից ոռնալ, և ձուկերը վշտից լեզու առնէին, և վախեցած թռչունները գետին թափւէին՝ այն ժամանակ էլ չէի վախենալու: Ամէնքի համար միայն աշխարհը պիտի կործանէր, իսկ ինձ համար բանտը պիտի բացւէր: Ուրեմն ինչի՞ց պիտի վախենամ: Ես մե՛րկ եմ:

5.

— Եւ եթէ կործանէր ամբողջ տիեզերքը, և զարհուրանքը պատէր անսահմանութեան մէջ բոլոր կենդանի արարածներին՝ այն ժամանակ էլ չէի վախենալու: Ամենքի համար կործանել է աշխարհը, իսկ ինձ համար բանտն է բացւել: Ուրեմն, ինչի՞ց պիտի վախենամ: Ես մե՛րկ եմ:

6.

— Եւ այժմ, երբ ձեր հրացանների մէկ համազարկով դուք մի անգամից ոչնչացնելու էք ինձ համար և՛ աշխարհը և՛ տիեզերքը — այժմ նոյն իսկ չեմ վախենում: Ձեր բոլորիդ համար կը խորտակւի և կը տապալւի մարդկային մի մարմին, իսկ ինձ համար բանտը կը փակւի: Կրակեցէ՛ք, զինւորներ: Ես մե՛րկ եմ:

7.

Ջահերը վառուում էին: Դա ամենակարճ օրն

էր, որ երբևիցէ տեսած էր: զիչերը երկրի վրայ իջաւ այնքան շուտ, ինչպէս երբէք չէր պատահած:

— Այժմ, դո՛ւն կանգնիր, — հրամայեց սպան, երբ ընկաւ Պասկալէ պրօֆեսօրը:

Ճիշտ էր դա, որ ինձ վրայ յանցանք տեսած չէին, և ինձ ամենևին պէտք չէ որ սպանէին: Բայց միթէ կարելի՞ է նրանց հետ վիճարանել: Եւ ես կանգնեցի: Բայց ես այնքան ցաւում էի զիչերան համար, — հասկանո՞ւմ ես, զիչերան համար: Այստեղ նրան փշացնում էին ջահերն ու հրդեհը, իսկ այնտեղ, հեռու՝ ջահերի ու հրդեհների, աւերակների ու դիակների միւս կողմ, նա այնքան պինդ էր, հաստատուն և խաւար, ինչպէս իմ երիտասարդութեան օրերում: Ես սիրում եմ զիչերը: այն ժամանակ ես ինձ չեմ տեսնում և կարող եմ մտածել ամէն բանի մասին, ինչ որ ցանկամ: Ցերեկը միայն մինչև հագուստս է հասնում, բայց աւելի հեռու չէ անցնում. զարկում է մարմնիս մթութեան վրայ և կուրանում է. իսկ զիչերը մինչև իմ սիրտս է հասնում — և այդ է պատճառը, որ զիչերը այնքա՛ն հաճելի է սիրել — այդ ամէն ժողով է կարող է թեզ ասել: Ես կուզէի միայն մէկ ժամ մնալ իսկական, գեղեցիկ, մութ գիչերան մէջ — ոչ աւելի: Բայց նրանց հետ միթէ կարելի՞ է վիճել: Եւ ես կանգնեցի:

Բայց սէրը հաճելի է նոյն իսկ ցերեկն էլ, երբ արևն է վառւած: Սէրը, տեսնո՞ւմ ես, զիչերուայ պէս է, և նոյնպէս մինչև սիրտն է հասնում. և սիրոյ մէջ նոյնպէս ինքդ թեզ տեսնում, որպէս և զիչերուայ մէջ: Իսկ եթէ դուն միաժամանակ աչքերի մէջ ես նայելու,

ճիշտ սևորակ աչքերի մէջ, առանց հայեացք հեռացնելու....

Յանկարծ, սպան բարկացաւ զինւորների վրայ ինչ որ պատճառով և գոռաց ինձ վրայ.

— Կորի՛ր:

8.

Անցաւ դարձեալ մի օր: Եւ այդ օրը զինւորները հրացանազարկ արին այն երիտասարդին, որը ինձ հայր էր անւանում:

9.

Վրայ հասաւ զիչերը, և ես հեռացայ մեռեալների քաղաքից:

10.

Dies iræ — զայրոյթի օր, վրէժի և գոռոզ հատուցման օր, Զարհուրանքի ու Մահւան օր:

11.

.... Այն թափօրը, որ պատի տակից տեսայ՝ մի անքնական ու զարհուրելի երեւոյթ ունէր: Նրանք տանում էին իրենց սուրբերի արձանները, բայց չը գիտէին, թէ հարկաւոր էր նրանց աւելի բարձրացնել, թէ գետնին զարկել եւ փշրանքները ոտի տակ կոխկրտել: Ոմանք տակաւին անիծում էին, մինչդեռ ուրիշները արդէն աղօթում էին, բայց ամէնքն էլ միասին էին գնում, մէկ հօր, մէկ մօր — Զարհուրանքի ու Մահւան դաւակները: Ցատկում էին հողի ճեղքածների վրայ ի վրայ սերի մէջ ընկնում: Եւ այն օրը զիչերի պէս ճօճւում էին սուրբերը:



Dies irae . . . . Մէկը երգում էր, միւս լա-  
լիս, մէկն էլ ծիծաղում. ունում էին խելա-  
գարների պէս: Շարժում էին ձեռքերը եւ ա-  
մէնքը շտապում: Փախչում էին հաստամար-  
մին արեղաներ: Ո՛ւմնից էին փախչում. նրանց  
ետեւ ճանապարհը ամայի էր. խոնարհօրէն ա-  
րեւի տակ տաքանում էին աւերակները, եւ կրա-  
կը հողի խորքերն էր քաշւում, միտալուց յոգ-  
նած:

12.

Ո՛ւմնից էին նրանք փախչում. — իրենց ե-  
տեւը ամայութիւն էր:

13.

Ինչո՞ւ է ինձ այժմ զարհուրանք պատում,  
և ինչո՞ւ եմ քայլերս արագացնում: Այնտեղ  
ես սարսափին ծանօթ չէի:

14.

Ինձ յայտնի չէր, որ ոտներս այսքան սի-  
րում են քայլել: Նրանք սիրում են իրենց իւ-  
րաքանչիւր քայլը, և վշտով են նրանից անջատ-  
ւում, կարծես ուզում են յետ նայել. և այն-  
քա՛ն անյագուրդ են նրանք. ամենաերկար ճա-  
նապարհը նրանց կարճ է թւում, ամենալայնը՝  
նեղ: Նրանք ցաւ են զգում — հասկանո՞ւմ ես  
-- որ միանգամից չեն կարող քայլել՝ առաջ և  
յետ, աջ ու ձախ: Եթէ նրանց թոյլ տրւի՝ ամ-  
բողջ երկիրը իրենց հետքերով պիտի ծածկեն,  
ոչ մի կտոր ազատ հող չեն ձգելու. և դար-  
ձեալ նոր տեղեր պիտի փնտռեն:

Եւ ահա թէ ի՛նչ բան ևս յայտնի չէր ինձ.

ես չը գիտէի, որ աչքերս կարող են շնչել:

— 15. Հեռու ծովն է երեւում:

15.

Դարձեալ ի՞նչ պատմեմ քեզ. ինձ ձերբա-  
կալեցին ժանդարմները:

16.

Դարձեալ դուն բանտիս դռները փակեցիր,  
ո՛վ մարդ: Ե՞րբ արդեօք կարողացար կառու-  
ցել այն. տակաւին աւերակ է քո տունը. Թա-  
կաւին զաւակներիդ ոսկորները չեն մերկացած  
իրենց գերեզմաններում, իսկ դուն արդէն  
մուրճի հարւածներ ես իջեցնում, ծեփով փակ-  
ցնում ես հնազանդ քարը, և առջևդ երկարում  
հլու երկաթը: Ինչքա՛ն արագ ես բանտեր  
բարձրացնում, ո՛վ մարդ:

Եկեղեցիներդ դեռ աւերակ են, իսկ բանտը  
արդէն պատրաստ:

Ձեռքերդ դեռ դողում են երկիւղից, և  
արդէն բանալիների վրայ են երկարում, կող-  
պէքները հնչեցնում, փակում: Դուն մի երա-  
ժիշտ ես. ոսկու հնչիւնի հետ դուն պէտք ես  
զգում և շղթաների ձայնը լսելու. թո՛ղ դա  
էլ իր բամբը լինի:

Տակաւին մեռելութեան կնիք է դրոշմւած  
քո գունատ զթի ծայրին, իսկ դուն արդէն մի  
ինչ որ բան ես հոտոտում, շտապով այս ու այն  
կողմն ես քիթդ շրջում:

Ի՛նչքան արագ ես դուն բանտեր բարձրաց-  
նում, ո՛վ մարդ:

17.

Երկաթը մինչև իսկ չէ հնչում — այնքան պինդ է նա. և սառն է, երբ շօշափում ես, ինչպէս մի անծանօթի սառուցեայ սիրտը: Լուռ են նաև պատի քարերը, և պաղ են, երբ շօշափում ես, ինչպէս մի անծանօթի սառուցեայ միտքը: Որոշեալ ժամին գալիս է բանտապահը և նետում է ուտելիքս, ինչպէս վայրի գաղանին: Իսկ ես ատամներս եմ կրճտում. — ինչո՞ւ չը կրճտեմ ատամներս: Ես անօթի եմ ու մերկ: Եւ զարկում է լարեած ժամացոյցը:

Դու գո՞հ ես, իմ տէ՛ր, ո՛վ մարդ:

18.

Բայց ես չեմ հաւատում քո բանտին, իմ տէ՛ր, ո՛վ մարդ: Բայց ես չեմ հաւատում քո երկաթին, չեմ հաւատում քո քարին, քո ոյժին, իմ տէ՛ր, ո՛վ մարդ: Այն՝ ինչ ես կործանեա՞ծ տեսայ՝ երբէք կրկին չէ վերաշինելու:

Այդպէս պիտի ասէր նաև Պասկալէ պրօֆեսօրը:

19.

Լարի՛ր ժամացոյցը, նա լաւ է ժամանակը ցոյց տալիս, քանի որ կանգ չէ առած: Հնչի՛ր բանալիներդ, — չէ՞ որ նոյն իսկ դրախտը բանալիներով ես գոցած: Հնչի՛ր բանալիներդ և գոցի՛ր, — նրանք պինդ են փակում, քանի որ դռներ գոյութիւն ունին: Եւ զգուշութեամբ պտոյտներ գործի՛ր շուրջը:

Եւ երբ խաղաղութիւնը տիրէ՝ դուն պիտի ասես. — այժմ լաւ է, այժմ բոլորովին հանգստութիւն է. և պառկելու ես քնելու համար:

— Այժմ բոլորովին անդորրութիւն է, պիտի ասես ինքդ քեզ. — և ես լսում եմ, ինչպէս նա կրծոտում է երկաթը իր ատամներով, բայց երկաթը աւելի հաստատուն է. — այդպէս պիտի ասես դուն և քնես: Եւ երբ քնես, երջանիկ ձեռքերիդ մէջ բանալիները սեղմած՝ յանկարծ կը մռնչէ ստորերկրեայ փողահարը, որոտալից շփոթով կը գարթեցնի քեզ, սարսափի ոյժով քեզ ոտի կը կանգնեցնի, հզօր ձեռքերով քեզ տեղդ կը գամի, որպէսզի տեսնես մահը՝ մեռնելով: Աչքերդ ցերեկւոյ նման լայնօրէն պիտի բացւին, և զարհուրանքից պիտի ճեղքւին. սրտիդ մէջ ականջներ պիտի բուսնեն, որպէսզի դուն լսես մահը՝ մեռնելով:

Եւ ժամացոյցը կանգ է առնելու:

20.

Ազատութի՛ւն . . . . :





«Ազգային գրադարան»



NL0310510

## « Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք »-ի Հրատարակութիւնները

1. — ԱՆԴՐՕՆԻԿԷ՛, վէպ յոյն յեղ. կեանքէ, Ս. Բուկնոսի, թարգմ. Ի. Ս. Երան: Գին՝ \$1.00:
2. — ԱՐՇԱՂՈՅՍ, Տրամա թիւրքաձայ կեանքէն վարդազտի: Գին՝ 10 սէնթ:
3. — ՄՕՍՈՒՆ ԵՒ ԶՕՐԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ, Օնկիկի: Գին՝ 10 սէնթ:
4. — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՎԻՊՍԿՆԵՐ, Միր-Հազորի: Գին՝ 5 սէնթ:
5. — ՍՍՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿՍՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Յ: Յ. Չաղմաղճեանի: Գին՝ 25 սէնթ:
6. — ՀԱՅՐԵՆԻՔ ԵՐԳԱՐԱՆ, Դին՝ \$2.50, Տաճ. կատանի համար զեղջւած 37.50 դրուշ:
7. — ՌՈՒՍ-Ս. ՅԵՂ. ԾՐԱԳԻՐԸ, Թրգմ. Ն. Հոնգոյց: Գին 10 սէնթ, Տաճկ. 2 Ղրուշ:
8. — ՄԻՈՒԹԵԱՆ ԿՍՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԽՐՆԴԻՐԸ, Ն Տ. Ս. Թ. -ի: Գին՝ 25 սէնթ:
9. — ՍՕՅԻԱԼԻԶՄԸ ԵՒ ԴՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Էնրիկո Ֆէրրի, թարգմ. Ա. Իսրայէլեան: Գին՝ 25 սէնթ:
10. — ԻՄ ԵՂԲԱՅՐ ԳԻՒՂԱՑԻՒՆ, Էլեգի Ռեւիլ, թրգմ. Տիկ. Ս. Պաղտասարեան: Գին՝ 5 սէնթ:
11. — ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ, Միքայէլ Նապանտեանց: Գին՝ 25 սէնթ:
12. — ՔՐԻՍՏՈՍԻ ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ, Վ. Խորէնի: Գին՝ 5 սէնթ:
13. — ԿՐԷՆԳԸՊԻՂ, (Վէպ) Անաթոլ Յրանսի, Թրգմ. Տիկ. Ս. Պաղտասարեան, Գին 5 սէնթ:
14. — ՉԱՅՐԱՅԹԻ ՕՐԸ, Լէօնիդ Անդրեէվ, թրգ. Ա. Ս.: Գին 5 սէնթ: